ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 536-Ա

09 սեպտեմբերի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի, Կառավարության 2018 թվականի օգոստոսի 13-ի N 878-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 7-րդ և 14-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

09.09.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108405 03

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թ. սեպտեմբերի 09 -ի
536 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1.Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1236-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի «Պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները (տարածքները) գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու մասին» N 346-Ն որոշման կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2028 թվականի հունիսի 1-ը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 17-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1171-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացում:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը ունի որոշակի գործառույթներ վերը նշված որոշումների պահանջների կատարման վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը վերապահված գործառույթներով սահմանված է՝

• Իրականացնել աջակցություն պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման, պահպանման և օգտագործման ուղղությամբ կատարվող աշխատանքներին, ապահովել անշարժ գույքի օտարման, վարձակալության և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքները.
• Իրականացնել ենթակառուցվածքների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրաֆիկացում, բնակարանային տնտեսություն, համատիրություններ, կապ և այլն) վերաբերյալ համապատասխան տեղեկությունների կազմում.

Վերոնշյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը վերապահված գործունեության ոլորտում որոշակի ժամկետով ծրագրերի իրականացման դեպքով ներգրավել փորձագետ:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը՝

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար փորձագետ ներգրավում է **6 ամիս** /վեց/ ամիս ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը՝

• Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշմամբ հաստատված պահանջների կատարում.
• Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 17-ի N 1171-Ա որոշմամբ հաստատված պահանջների կատարում.
• Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման, պահպանման և օգտագործման ուղղությամբ կատարվող աշխատանքների, անշարժ գույքի օտարման, վարձակալության և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքների իրականացում.
• Ենթակառուցվածքների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրաֆիկացում, բնակարանային տնտեսություն, համատիրություններ, կապ և այլն) վերաբերյալ համապատասխան տեղեկությունների կազմում.

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը՝

Փորձագետը սույն ծրագրով հանձնարարված աշխատանքների վերաբերյալ երեք ամիսը մեկ անգամ՝ միչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները՝

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները: Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6.Փորձագետին ներկայացվող պահանջները՝

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն
- հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ
- հայերենի, ռուսերենի գերազանց իմացություն
- քաղաքաշինության ոլորտի իրավական ակտերի իմացություն
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2024-04-09 12:57:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ